ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Կոզիշսթի 1

№ 2430-Ա « 01 » հուլիսի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԿՈՊԵՆՀԱԳԵՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ՀՀ-ում ԱՀԿ տարածաշրջանային տնօրենի հատուկ ներկայացուցիչ Մարթե Էվերարդի հրավերը՝ «Թվային առողջապահություն և առողջապահական տեղեկատվական համակարգի հեռանկարներ» խորագրով աշխատաժողովին մասնակցելու նպատակով և ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2024 թվականի հուլիսի 21-ից 25-ը ներառյալ գործուղել Դանիայի Թագավորության մայրաքաղաք Կոպենհագեն՝ հետևյալ կազմով.

Դավիթ Կարապետյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ
Արմինե Զոհրաբյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետի տեղակալ

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանի և առողջապահության վարչության պետի տեղակալ Արմինե Զոհրաբյանի բացակայության ընթացքում առողջապահության վարչության պետի և պետի տեղակալի պարտականությունները վերապահել նույն վարչության պետի տեղակալ Անահիտ Չարխիֆալաքյանին:

4. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող

փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ